ՏԻԳՐԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ
(ՀՀ ԳԱԱ ՀԱԻ)

ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ԱՄՈՒՍՆՈՒԹՅՈՒՆՆ ԻՐԱՆՈՒՄ

Ամուսնությունը, համաձայն Շիա իսլամի ավանդական ձևի, լինում է երկու տեսակ՝ մշտական ամուսնություն (نكاح) և ժամանակավոր ամուսնություն (**نكاح منقطع**،صيغه), իսկ Մուհաղղիղ ալ-Հիլլին՝ ավանդական Շիա իրավաբաններից ամենաակնառու դեմքերից մեկը, ամուսնությունը բաժանում է 3 տեսակի՝ մշտական ամուսնություն, ժամանակավոր ամուսնություն և ամուսնություն ու սեռական կապ իգական սեռի ստրուկների հետ (վերջինս այժմ գործածական չէ): Ավանդական Ֆեղում[1] ամուսնությունը (մշտական և ժամանակավոր) համարվել է միջոց սեռական հարաբերություններն օրինականացնելու ու հայրությունը որոշելու, ինչպես նաև որպես անձնական պայմանագիր երկու սեռերի հետագա համատեղ կյանքի համար: Ամուսնությունը դիտվում է նաև որպես կրոնական պարտավորություն, քանի որ այն բարոյականությունը պահպանելու միջոցներից է և, մասնավորապես մշտական ամուսնությունը, ունի սրբազան

[1] Али-заде Айдын Ариф оглы Ислам: Энциклопедический словарь, Ансар, 2007, с. 748-750. Ժամանակին զուգընթաց մահմեդական սգբնաղբյուրներում հիշատակված «ֆեղ» բառը աստիճանաբար սկսվել է օգտագործվել ավելի լայն իմաստով: Ֆեղի առարկան սկսել է ընդգրկել այնպիսի լայն բնագավառներ, ինչպիսիք են մարդու և հասարակության, ինչպես նաև մարդու և Ալլահի փոխհարաբերությունները: Սկսվել է ուշադրություն դարձվել նաև մարդու անհատական խնդիրներին: Հարկ է նշել, որ այդ ամենը իր ուրույն տեղն է ունեցել նաև մարգարեի և նրա աջակիցների կյանքի տարիներին: Սակայն վերջին տասնամյակում ֆեղի համակարգը սկսել է համակարգվել մուսուլման իրավագետների կողմից և ստացել է այն վերջնական տեսքը, որով և այն հատնի է այսօր: Այդպիսով, «խորը ընկալում» և «գիտելիք» այն ամենի մասին, ինչ Ալլահը թույլ է տվել մարդկանց և ամենի մասին, ինչը Նա արգելել է, անհրաժեշտ են այն բանի համար, որպեսզի ապացուցողական հենքի վրա դրվեն բացարձակապես բոլոր կրոնական իրավական կարգավորումները:

բնութագիր, որն այլ պայմանագրերում չի արտացոլվում: Ինչպես հիշատակվում է մահմեդականների սուրբ գրքում՝ Ղուրանում, պետք է «օգնել մարդկանց խուսափել շնությունից, և դեպի այդ զազրելի քայլին տանող ամեն ինչից: Դրա համար ամուսնությամբ միավորեք չամուսնացած տղամարդուն և կնոջը և ձեր արդար ստրուկներին և ստրկուհիներին»[2]: Մուհամմեդ մարգարեն ասել է. «Ով հնարավորություն ունի ամուսնանալու, թող ամուսնանա, քանի որ դա օգնում է խոնարհել հայացքը և պահել ողջախոհությունը՝ չտրվելով կրքերին: Ով կարող է, թող պաս պահի, քանի որ դա պահպանում և պաշտպանում է[3]»:

Իրանի քաղաքացիական օրենսգիրքը չի նշում, թե ամուսնությունն ինչ տեսք ունի, բայց Սահմանադրության 10-րդ հոդվածը սահմանում է. «Համարելով, որ ընտանիքը իսլամական հասարակության հիմքն է, բոլոր համապատասխան օրենքները, կանոնները ու ծրագրավորած պայմանները (կետերը) պետք է ծառայեն ընտանիքների կայացմանը հեշտացնելուն, ընտանիքը որպես սրբության պահպանմանը, ընտանեկան հարաբերությունների ամրապնդմանը՝ հիմք ընդունելով իսլամական օրենքները և էթիկան»:

Ամուսնությունը համարվում է ժամանակավոր, երբ ամուսնական պայմանագրի մեջ հստակ նշվում է ամուսնության ավարտի ժամկետը: Ժամանակավոր ամուսնությունը պետության կողմից ճանաչվում է որպես օրինական և կարգավորվում է Իրանի Իսլամական Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի համապատասխան հոդվածներով: Ինչպես մշտական, այնպես էլ ժամանակավոր ամուսնության դեպքում կարևոր պայման է երկկողմ համաձայնությամբ մահրիեի[4] չափի որոշումը:

---

[2] Ղուրան, 24:32:

[3] Նույն տեղում, 24:33:

[4] Սարգսյան Տ., Ամուսնական հարաբերությունները կարգավորող «մահրիեն» Իրանի Իսլամական Հանրապետությունում, Մերձավոր Արևելք. Պատմություն, քաղաքականություն, մշակույթ, հ. XI-XII, Երևան, «Գիտություն», 2017, էջ 137-149:

Ժամանակավոր ամուսնությունն ունի բավականին խորն արմատներ: Այն գոյություն է ունեցել դեռևս Մուհամմեդ մարգարեի օրոք, բայց արգելվել է երկրորդ խալիֆ Օմարի (591-644) ժամանակ և մերժվել է բոլոր Սուննի դպրոցների կողմից: Այսպիսի ամուսնությունները հատուկ են միայն շիա մահմեդականների շրջանում, մասնավորապես ԻԻՀ-ում, քանի որ այն նույնիսկ այսօր գրեթե չի հանդիպում այլ երկների իրանական համայնքներում:

Իրանում ժամանակավոր ամուսնությունն այսօր էլ արդիական է և երկրի հասարակության շերտերում յուրովի է ընկալվում: Հատկապես այս թեմային մեծ ուշադրություն է դարձնում ոչ կրոնական ուղղվածություն ունեցող, արևմտյան արժեքներին հարող մտավորականների մեծ մասը:

Վերոնշյալ թեմայի բազմակողմանի ուսումնասիրության համար որպես աղբյուր են հանդիսացել մեր կողմից Իրանի մայրաքաղաք Թեհրանում կատարված դաշտային հետազոտությունները՝ խորացված հարցազրույցներ, դիտարկումներ, իրանցիների հետ առօրյա զրույցներ, տեղական հեռուստատեսությամբ հեռարձակվող հաղորդումներ, ֆիլմեր, տեսանյութեր, ինչպես նաև համապատասխան գրականություն:

Նշված խնդրի վերաբերյալ հետազոտություններ են կատարել մի շարք հեղինակներ, որոնց թվում են արևմտյան մշակութային մարդաբան Շահրա Հայերին, ով հետազոտություններ է կատարել Իրանում, Պակիստանում և Հնդկաստանում՝ ծավալվելով մուսուլմանական աշխարհում կրոնի, օրենքի և գենդերային շարժման շուրջ: Այս թեմային նա անդրադարձել է իր "***Law of Desire: Temporary Marriage, Mut'a, in Iran*** (1989, 1993)" գրքում: Նշված թեմային իր "Marriage on trial: a study of Islamic family law: Iran and Morocco compared. London [etc.], Tauris, 1993" գրքում անդրադառնում է նաև իրավական մարդաբան Զիբա Միր Հոսեյնին, ով մասնագիտացված է իսլամական օրենքում և գենդերային հարցերում:

Ժամանակավոր ամուսնության թեման արծարծվում է նաև Իրանի իսլամական հեղափոխության առաջնորդ Այաթոլլա Խոմեինիի

աշխատություններում՝ մասնավորապես իր “A Clarification of Questions: an unabridged translation of Resaleh towzih al-masael. Translated from the Persian by J. Borujerdi. Boulder, CO, Westview Press, 1984” աշխատությունում:

Ժամանակակից Իրանում, մասնավորապես՝ Թեհրանում, լայն տարածում ունի ժամանակավոր ամուսնությունը, որն այսօր թույլատրված է նաև օրենքով: Ըստ ԻԻՀ-ի Քրեական օրենսգրքի՝ միմյանց հետ չամուսնացած անձիք սեռական հարաբերություն ունենալու համար պատժվում են մտրակի 100 հարվածով, իսկ ամուսնացած անձանց կողմից դավաճանությունը պատժվում է քարկոծումով, բացառությամբ, եթե կինը սեռական հարաբերություն է ունենում անչափահաս տղայի հետ. այս դեպքում նրան հասնում է ավելի մեղմ պատիժ՝ ծեծ[5]: Այնուամենայնիվ, Իրանում գոյություն ունի այս պատժամիջոցներից խուսափելու ձև՝ ժամանակավոր ամուսնություն, որը հաստատված է օրենսդրորեն և հոգևորականների կողմից լայնորեն խրախուսվում և քարոզվում է: Այն այսօր հասարակության մեջ առաջ է բերել մի շարք խնդիրներ, որոնց ուսումնասիրությունն արդիական է:

Այսօր աշխարհում Իրանը միակ երկիրն է, որը ճանաչում է ժամանակավոր ամուսնության վավերականությունը, ինչն ունի ավելի ցածր սոցիալական դիրք, քան մշտական ամուսնությունը:

Իրանում, բացի չորս մշտական ամուսնություններից, որը թույլատրվում է ըստ Շարիաթի, տղամարդը միաժամանակ կարող է ունենալ այնքան ժամանակավոր ամուսնություններ, որքան նա ցանկանա: Ժամանակավոր ամուսնությունը նաև ընդունվում է Իրանի երիտասարդության կողմից, որոնց ընտանիքները դեմ են նրանց ընտրյալի հետ ամուսնությանը կամ որոնք պատրաստ չեն դիմել իրենց ընտանիքներին՝ անհրաժեշտ թույլտվություն և օգնություն ստանալու ամուսնության ծախսերի և պատրաստությունների համար: Ժամանակավոր ամուսնությունը չի արձանագրվում այնպես,

---

[5] https://www.unodc.org/tldb/pdf/Islamic_Penal_Code_in_Farsi.pdf ماده 88 قانون جزایی ایران ،

ինչպես մշտական ամուսնությունը, սակայն դատարանը կարող է արձանագրությունը հաստատող հատուկ հրաման տալ: Պայմանագիրը սովորաբար կազմվում է ամուսնությունը գրանցողի կողմից:[6]

Ժամանակավոր ամուսնությունը, ի տարբերություն մշտական ամուսնության, չի գրանցվում սեջիլի[7] մեջ, և մշտական կանայք կարող են նաև չիմանալ ժամանակավոր կանանց մասին: Ամուսնական պայմանագիրը սովորաբար կազմվում է ամուսնությունը գրանցողի կողմից (օրինակ նկար 1)[8]:

بسم الله الرحمن الرحیم

الحمد لله الذی احل النکاح و الزواج و حرم الزنا و السفاح و الف بین القلوب بعد الفراق و الشقاق .
قال رسول الله (ص) : « النکاح سنتی فمن رغب عن سنتی فلیس منی »

طبق رای شورای محترم نگهبان ۱۶۸۸/۹۶/۹۶ مندرج در روزنامه رسمی شماره ۱۱۵۰۲/۹۶/۹۶ مبارکی و میمنت و خوشبختی و سعادت ،
عقد نکاح موقت به مدت ... فیما بین ؛
زوج آقای ... به شماره شناسنامه ... صادره از ... متولد ...
فرزند ... شغل ... دین اسلام ساکن : ...
و زوجه خانم ... به شماره شناسنامه ... صادره از ... متولد ...
فرزند ... شغل ... دین اسلام ساکن : ...

Նկ. 1

Ժամանակավոր ամուսնությունը ներառում է օրինական սեռական կապ և երեխաներ ունենալու իրավունք, որը, սակայն, քիչ է հանդիպում: Այս ամուսնությունից ծնված երեխաներն ունեն իրավական օրինականություն, սակայն հասարակության կողմից մասամբ չեն ընդունվում և անարգվում են: Չնայած նրանք օրինական են, սակայն նրանք չունեն մշտական ամուսնությունից ծնված երեխաների դիրքը հասարակության մեջ: Իրականում օրենքով ժամանակավոր ամուսնության նպատակը ոչ թե երեխաներ ունենալն է, այլ տղամարդու սեռական հաճույքը (istimta')[9]:

---

[6] Mir-Hosseini Z., Marriage on trial: a study of Islamic family law: Iran and Morocco compared, London [etc.], Tauris, 1993, p. 166-167.

[7] Ընտանեկան գրքույկ:

[8] Պայմանագրի օրինակը ներբեռնված է համացանցից:

[9] In practice it appears that temporary marriage is also used by women to legitimate their sexual enjoyment, but they do not have a right to sexual satisfaction (unlike a permanent wife).

Իմամ Խոմեյնին սահմանում է, որ ժամանակավոր ամուսնական պայմանագիրը վավեր է նույնիսկ այն դեպքում, երբ իրական նպատակը հաճույքը չէ, և պայմանագիրը նշում է, որ կարող է և սեռական հարաբերություն չլինի[10]: Այս կետի նշանակությունն այն է, որ ժամանակավոր ամուսնությունը սովորաբար օգտագործվում է որպես միջոց կողմնակի տղամարդուն տուն ընդունելու, որտեղ կինը հակառակ դեպքում պետք է քողարկված լինի և մեկ այլ կին ևս տանը լինի. Իսկ ժամանակավոր ամուսնության ժամանակ տղամարդու ներկայության դեպքում պահանջում է, որ տանն այլ կանայք չլինեն կամ քողարկված լինեն: Իմամ Խոմեյնին մի տղամարդու օրինակ է բերում, ում համար անհարմար է, որ իր եղբոր կինը իր «մտերիմը» չէ, այսինքն՝ նա պետք է քողարկվի իրենից, չի կարող իր հետ մենակ մնալ: Այլ կերպ ասած՝ ժամանակավոր ամուսնությունը, որը չի նախատեսում սեռական հարաբերություններ, օրինականացնում է դա, եթե զույգն այդպես է որոշում[11]:

Ժամանակավոր ամուսնությանը վերաբերող ցանկացած անորոշություն պայմանագիրը դարձնում է անվավեր[12]: Մեհրիեի պայմանի վերաբերյալ հոդված 1077-ը սահմանում է, որ նույն պայմանները կիրառվում են այնպես, ինչպես մշտական ամուսնության դեպքում, մինչդեռ հոդված 1095-ը ասում է, որ մեհրիեի բացակայությունը պայմանագիրը չեղյալ է դարձնում:

Հատկանշական է, որ, համաձայն քաղաքացիական օրենսգրքի, ժամանակավոր ամուսնությունն ունի փոխադարձ ժառանգության միևնույն իրավունքները, ինչ մշտական ամուսնությունը: Խոմեյնին ասում է, որ ժամանակավոր ամուսնության մեջ զույգերը մեկը մյուսից

---

[10] Khomeini, Ayatollah Sayyed Ruhollah Mousavi. A Clarification of Questions: an unabridged translation of Resaleh towzih al-masael, translated from the Persian by Borujerdi J., Boulder, CO, Westview Press, 1984, 2421, 2423.

[11] Նույն տեղում, 2420, 2429:

[12] ԻԻՀ-ի Քաղաքացիական օրենսգրքի հոդված 1076:

ժառանգություն չեն ստանում[13]: Այսպիսի ամուսնությունները սովորաբար չեն գրանցվում, բայց դատարանը կարող է հրաման տալ հաստատել բացառիկ ամուսնության գրանցումը[14]: Ժամանակավոր ամուսնությունը չի լիազորում կնոջը նաֆաղե (աջակցություն) ստանալ մինչև այն հատուկ չհամաձայնագրվի[15]:

Եթե ամուսնությունը վերջանում է մինչև առաջին սեռական հարաբերությունը, ապա կինն իրավունք ունի ստանալ մեհրիեի կեսը, սակայն նա կորցնում է ամբողջ գումարը, եթե իր պահանջով է ավարտվում ամուսնությունը կամ վերագրվում է իր գործողություններին: Կինը կարող է իր հնազանդությունը պայման դարձնել մեհրիեն ամբողջությամբ ստանալու համար, իսկ տղամարդը կարող է ամբողջ գումարը հետ պահանջել, եթե կինը հրաժարվի սեռական կապից հենց սկզբից, և մի մասը, եթե կինը նրան հետո մերժի: Այնուամենայնիվ, ամուսինն իրավունք ունի հետ պահանջելու գլխագնի մի մասը, եթե կինը մահանում է ամուսնության ընթացքում[16]: Ժամանակավոր ամուսնության ժամանակ կինը չի կարող պահանջել աջակցություն կամ սեռական հարաբերություն մինչև դրանք պայմանագրի մեջ չնշվեն:

Իմամ Խոմեյնին ասում է, որ ամուսինը չպետք է մերժի սեռական հարաբերությունը իր ժամանակավոր կնոջ հետ չորս ամսից ավել[17]:

Եթե կինը հղիանում է, նա լիազորված չէ աջակցություն ստանալ հղիության ընթացքում: Կինը պետք է հասանելի լինի սեռական հարաբերությունների համար, սակայն նա միևնույն ժամանակ ազատ

---

[13] Khomeini, Ayatollah Sayyed Ruhollah Mousavi. A Clarification of Questions: an unabridged translation of Resaleh towzih al-masael, 2425.

[14] Mir-Hosseini, Ziba. Marriage on trial: a study of Islamic family law: Iran and Morocco compared. London [etc.], Tauris, 1993, p. 166.

[15] ԻԻՀ-ի Քաղաքացիական օրենսգրքի հոդված 1113:

[16] Նույն տեղում՝ հոդված 1096:

[17] Khomeini, Ayatollah Sayyed Ruhollah Mousavi. A Clarification of Questions: an unabridged translation of Resaleh towzih al-masael, 2422.

է, պարտավոր չէ տղամարդուց թույլտվություն վերցնի տանից դուրս գալու կամ աշխատելու համար[18]:

Ժամանակավոր ամուսնության մեջ ամուսնալուծություն չկա, բայց տղամարդը կարող է «ժամանակի նվեր անել», այսինքն՝ այն ժամանակի, որ պայմանագրով մնացել է՝ ասելով «Ես քեզ ժամանակ եմ տրամադրել...»: Սա վերջացնում է պայմանագիրը առանց վկայի ներկայության: Հակառակ ամուսնալուծության՝ կինը պարտադիր չէ, որ ծիսականորեն մաքուր լինի, երբ բանաձևն ընթերցվում է: Կինը պետք է նախքան կրկին ամուսնանալը անցնի պայմանագրին հաջորդող երկու դաշտանային շրջան, բայց սա չի պահանջվում, եթե նույն զույգը որոշի կրկին ամուսնանալ մշտական ամուսնությամբ[19]:

Քիչ չեն այն դեպքերը, երբ գյուղական բնակավայրերից սոցիալական ծանր պայմաններից ելնելով՝ երիտասարդ աղջիկները երջանիկ ապագա և աշխատանք գտնելու ակնկալիքով հեռանում են մեծ քաղաքներ և շատ դեպքերում, չկարողանալով գտնել համապատասխան աշխատանք, ստիպված են լինում ժամանակավոր ամուսնանալ, որի դիմաց ստացած մահրիեով փորձում են հոգալ իրենց կարիքները:

Հատկանշական է, որ ժամանակավոր ամուսնության ժամանակ սեռերի միջև տարիքը դերակատար չէ. գլխավոր նախապայմանը վճարունակությունն է: Ասվածը վառ արտացոլվում է Նահիդ Պերսոն Սարվեսթանիի «Մարմնավաճառություն վարագույրի ետևում» ֆիլմում: Այստեղ ներկայացվում է տանից փախած 17-ամյա Լեյլայի և 65-ամյա Հաբիբի ժամանակավոր ամուսնությունը, որը սահմանվում է 6 ամսով և այդ ամուսնության դիմաց Լեյլան ցանկանում է 200 ԱՄՆ դոլար մահրիե: Ամուսնությունը գրանցվում է իրավաբան-հոգևորականի կողմից և վճարի տեսակը և չափը որոշում է Լեյլան: Այս ժամանակավոր ամուսնությունը 6 ամսվա փոխարեն տևում է

[18] Նույն տեղում, 2427:
[19] Նույն տեղում, 2432:

ընդամենը 2 շաբաթ, քանի որ Լեյլան գումարը ստանալուց հետո մեկնում է այլ քաղաք:

Իրանում նկարահանվող ֆիլմերում անկաշկանդորեն ներկայացվում է ժամանակավոր ամուսնությունը, նրա հիմնական նպատակները: Թեմային հեռուստատեսությամբ հաճախակի անդրադառնում են նաև հոգևորականները, ովքեր այն ներկայացնում են որպես հասարակության կարիք և պահանջ: Այս տեսանկյունից հատկապես սուրբ քաղաքներում մեծանում է ժամանակավոր ամուսնության առաջարկն ու պահանջմունքը, հաշվի առնելով այն հանգամանքը, որ ուխտի մեջ գտնվող անձը հեռու է իր կնոջից և ունի կնոջ խնամքի կարիք: Այս համատեքստում կարելի է դիտարկել շիաների համար սուրբ քաղաք համարվող Մաշհադում ազատորեն ուխտավորներին բաժանվող թերթիկները, որոնցից օրինակ է բերված ստորև.



بسم الله الرحمن الرحیم

النکاح السنتی (ازدواج از سنتهای رسول اکرم صل الله علیه وآله و سلم است .)
آستان قدس رضوی جهت ارتقای فضای معنوی جامعه و ایجاد شرایط مناسب روحی و آرامش خیال برای برادران زائری که در مدت زیارت حرم مطهر امام هشتم از همسر خود دور میباشند اقدام به برگزاری مرکز صیغه های کوتاه مدت در جوار حرم رضوی نموده است .
در این راستا از کلیه خواهران باکرهٔ مومنه که سن آنها بین ۱۲ تا ۳۵ سال است دعوت به همکاری مینماید . هر یک از خواهران بر اساس قرارداد ۲ ساله ای که با آستان قدس رضوی منعقد مینمایند موظفند که ماهانه حداقل ۲۵ روز به صیغهٔ برادران زوار در آیند . مدت قرارداد جزء سابقهٔ اشتغال متقاضی محسوب می گردد . مدت هر صیغه از ۵ ساعت تا ۱۰ روز متغیر می باشد . مبلغ پرداختی بابت هر صیغه بدین شرح است :

صیغه های ۵ ساعته	۵۰ هزار تومان
صیغه های ۱ روزه	۷۵ هزار تومان
صیغه های ۲ روزه	۱۰۰ هزار تومان
صیغه های ۳ روزه	۱۵۰ هزار تومان
صیغه های از ۴ روز تا ۱۰ روز	۳۰۰ هزار تومان

خواهران باکره که برای اولین بار صیغه میشوند مبلغ یکصد هزار تومان اضافه بابت برداشتن پردهٔ بکارت دریافت خواهند کرد .

بعد از انقضای قرارداد ۲ ساله در صورتی که سن خواهران به حد نصاب ۳۵ سال نرسیده باشد ، در صورت تمایل می توانند در لیست انتظار صیغه های دائم قرار بگیرند . خواهران موظفند ۵ درصد از مبلغ دریافتی هر صیغه را به حرم مطهر واریز نمایند .
از کلیه خواهران علاقه مند درخواست می شود ۲ قطعه عکس تمام قد (با حجاب اسلامی) ، آخرین مدرک تحصیلی ، وضعیت بکارت و گواهی سلامت کامل روانی و جسمانی از سازمان بهداشت شهرستان محل سکونت خود را حداکثر تا سی و یکم اردیبهشت هزارو سیصد و هشتاد و نه به آدرس ذیل ارسال نمایند .

توجه : برای خواهران کمتر از ۱۴ سال رضایت رسمی پدر یا جد پدری یا عمو الزامی میباشد .

آدرس :

مشهد بارگاه امام رضا (ع) خیابان شهید نواب صفوی صحن کوثر
دفتر امور صیغه
جهت اطلاعات بیشتر با تلفن

حاج آقا محمود ممتاز ۰۰۹۸۵۱۱۲۲۲۵۷۹۰

تماس حاصل نمایید . برای آگاهی بیشتر از جزئیات کامل شرایط مربوطه به سایت آستان قدس رضوی مراجعه نمایید .

Թերթիկում ասվում է հետևյալը՝

▣ **Հանուն Բարեգութ Աստծո**

▣ Որպեսզի հասարակության մեջ ստեղծվի բարձր հոգևոր մթնոլորտ և ուխտավոր եղբայրները, որոնք ուխտի պատճառով հեռու են կանանցից, ուստի Ասթանե Ղոթսե Ղազավվին կազմակերպել է կարճատև /սիղե/ ժամանակավոր ամուսնության կենտրոն: Ուստի բոլոր հավատացյալ կույս աղջիկներին 12-25 տարեկանի շրջանակներում հրավիրում ենք համագործակցության: 2 տարվա պայմանագիր կնքելով՝ յուրաքանչյուրը պարտավոր է 1 ամսվա 25 օրը զբաղվել ժամանակավոր ամուսնությամբ՝ ժամկետը 5 ժամից մինչև 10 օր /փոփոխական է/:

▣ **Գնացուցակ**[20]

▣ մինչև 5 ժամ – 50 000 թուման

▣ 1 օր – 75 000 թուման

▣ 2 օր – 100 000 թուման

▣ 3 օր – 150 000 թուման

▣ 4 օրից 10 օր – 300 000 թուման

▣ Կույս աղջիկներին, որոնք առաջին անգամ են ամուսնանում, որպես նվեր կստանան 100 000 թուման: Եթե պայմանագրի ժամկետը վերջանալուց հետո աղջիկների տարիքը 35 չի լրացել, կարող են սպասել մշտական ամուսնության /սիղեյե դայեմ/: Նաև աղջիկները պարտավոր են եկամտից 5 տոկոս հանձնել ասթանե ղոթսին /մզկիթ/:

▣ Աղջիկները պետք է ներկայացնեն 2 նկար ամբողջ կազմվածքով, գլխաշորով, կրթության վկայական, կուսության և առողջության տեղեկագիր, հոգեկան առողջության տեղեկագիր:

▣ **Ուշադրություն.** 14 տարեկանից ցածր աղջիկների համար անհրաժեշտ է հոր համաձայնագիրը:

▣ Հասցե՝ Մաշհադ, Ասթանե ղոթս

---

[20] Այս թերթիկը ձեռք է բերվել 2010 թ., երբ 1 ԱՄՆ դոլարը համարժեք էր մոտ 990-1000 թումանի:

Այսպիսով, հաշվի առնելով այն հանգամանքը, որ Իրանում հոգևոր դասը կառավարում, որոշում և ուղղորդում է հասարակական կյանքի գրեթե բոլոր ոլորտները՝ խրախուսելով նաև ժամանակավոր ամուսնությունը, ապա այն դեռ կշարունակվի լայն տարածում գտնել: Երիտասարդությունը, չունենալով համապատասխան աշխատանք և միջոցներ ամուսնանալու, ամուսնական պայմանագրով պարտադրվող մերհրիեի վճարելու համար, նախընտրում է ժամանակավոր ամուսնության պայմանագիր կնքել՝ առանց հետագա պարտավորությունների:

TIGRAN SARGSYAN
(IAE)

TEMPORARY MARRIAGE IN IRAN

According to Islamic faith, marriage is viewed as a regional obligation since it is one of the means to keep morality. In particular, the permanent marriage has sacred characteristic.

Marriage is considered to be temporary when the date of end of the marriage is precisely mentioned in the Marriage Contract. Temporary marriage is legally accepted by the country and is regulated by the relevant articles of the Civil Code of the Islamic Republic of Iran. As in temporary marriage, also in the permanent marriage it is an important condition to mutually decide the amount of mahr.

Today Iran is the only country in the world which acknowledges the validity of temporary marriage having a lower social position than the permanent marriage.

Temporary marriage in Iran now is also actual and in different strata of society it is accepted differently. Especially a great attention is paid to this topic by the majority of non-religious intellectuals adhered to western values. The temporary marriage, to the contrary of permanent marriage, is not registered in segile (family book) and the permanent wives may not be aware of the temporary wives. The Marriage Contract is usually made by the one who registers the marriage. Temporary marriage includes legal sexual

relation and a right to have children which, however, has met seldom. The children born as a result of such marriage are legal but are not accepted by the society and are humiliated. Actually the aim of temporary marriage is not having children but the sexual pleasure of the man.

Taking into consideration the circumstance that Iran is a theocratic country and the government decides and guides almost all the spheres of the life encouraging also temporary marriage so it will yet expand. The youth not having relevant work and means to get married and to pay mahr stipulated by the Marriage Contract, prefer to conclude a Contract of temporary marriage without further obligations.